2019 թվականի ***ապրիլի 23-ին և 25-26-ին*** կանցկացվի ՈՒԳԸ-ի ավանդական **գիտաժողով՝ հետևյալ ուղղություններով՝**

1.Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ-հասարակական, պատմամշակութային հիմնախնդիրները **/23.04.2019/**

2.Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հոգեբանամանկավարժական հիմնահարցերը **/25.04.2019/**

3.Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության բժշկակենսաբանական հիմնահարցերը **/26.04.2019/**

Գիտաժողովի նյութերը հրատարակվելու են ժողովածուում:

Նյութերին ներկայացվող պահանջներն են.

1. վերևում՝ էջի կենտրոնում, մեծատառերով տպագրվում է նյութի վերնագիրը, 1 ին-տերվալ ցած՝ հեղինակի (3-ից ոչ ավելի) գիտական աստիճանը, կոչումը, անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ, որից 1 ինտերվալ ներքև՝ կազմակերպության, երկրի, քաղաքի լրիվ անվանումները, ապա՝ առանձին պարբերությամբ նշվում են նյութի առանցքային բառերը (5-8 բառ),

2. նյութի ծավալը պետք է լինի ***3 էջից ոչ պակաս***, MS Word 2007 ֆորմատով, 1 ինտերվալով՝ կիրառելով GHEA Grapalat տպատառը (շրիֆտը) 3 լեզուներով, տպատառի չափը՝ 12 պունկտեր, էջի յուրաքանչյուր կողմից 2 սմ տարածություն, թղթի չափը՝ A4 ֆորմատ (210x297 մմ),

3. ներկայացվող նյութերում անհրաժեշտ է ներկայացնել ուսումնասիրվող հարցի արդիականությունը, նպատակը, խնդիրներն ու հետազոտության մեթոդիկան, արդյունքների վերլուծությունը, եզրակացությունը և ուսումնասիրված գրականության ցանկը՝ այբբենական կարգով ***(նշել թեմային առնչվող մինչև 10 հիմնական աղբյուրներ):*** Եթե աշխատանքում կա հղում որևէ հեղինակից, ապա այդ հեղինակը պետք է լինի գրականության ցանկում: Հղումները տեքստում գրել ուղղանկյուն փակագծերում:

Վերջում՝ մեկ առանձին պարբերությամբ, ներկայացնել հայերեն տեքստին՝ ռուսերեն և անգլերեն, ռուսերենին՝ հայերեն և անգլերեն, անգլերենին՝ հայերեն և ռուսերեն՝ ***հոդվածի վերնագիրը, հեղինակի (4-ից ոչ ավելի) անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ, գիտական աստիճանը, կոչումը, առանցքային բառերը (5-8 բառ) և ամփոփագրերը՝ մինչև 70 բառի սահմանում,***

4. աղյուսակներ, գծանկարներ, բանաձևեր տեղադրել խիստ անհրաժեշտության դեպքում,

5. աշխատանքները պետք է հրատարակված չլինեն,

6. յուրաքանչյուր աշխատանք պետք է ունենա երաշխավորագիր ամբիոնի վարիչի ***կողմից կամ կարծիք:***

Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետում գիտաժողովը կանցկացվի ***ապրիլի 1-2-ը,***

Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետում՝ ***ապրիլի 3-4-ը:***

Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն,

Ուսանողական գիտական ընկերություն